

Ն. Ա. ՄԿՐՏՁՅԱՆ

Միջին հայերենի հոլովակաճ համակարգը իր շատ դրսևորումներով տարբերվում է գրաբարի հոլովակաճ համակարգից: Գրաբարից ստացած ժառանգությանը զուգընթաց միջին գրական հայերենի հոլովակաճ համակարգում երևան են գալիս այնպիսի նոր ձևեր, որոնք լեզվի պատմական զարգացման ընթացքում աստիճանաբար գերակշռող դիրք ձեռք բերելով, ի վերջո, հանգեցնում են լեզվի կառուցվածքի հետագա որակական փոփոխության:

Գրաբարում կան շատ բառեր, որոնք, իրենց ավանդական հոլովումն ունենալով հանդերձ, հաճախ այլ հոլովմամբ նույնպես հոլովվում են (գանձ, գանձի, գանձու...), որի հետևանքով միևնույն բառը, միևնույն հոլովում, ունենում է երկու և ավելի ձևեր: Այդպիսի ձևերը իրար հետ գտնվում են իմաստային կամ ոճական հարաբերության մեջ: Հր. Աճառյանը զուգամե հոլովում ունեցող բառերը անվանում է խառն հոլովման բառեր և ներկայացնում է մետրոպոլիտան հայերենում եղած խառն հոլովում ունեցող բառերի ցանկը, որտեղ ընդգրկված է 167 բառ¹: «Եթե նույնիսկ մետրոպոլիտան շրջանում խառն հոլովմունք կար, այդ նշանակում է, թե նույն ժամանակում արդեն հոլովներն սկսել են խառնվել: Հետագա դարերում շփոթությունը զարգանալով հասավ խառնակության մեծ աստիճանի»²,— գրել է նա:

Ուսումնասիրելով դասական գրաբարի հոլովակաճ զուգամտություն ունեցող բառերի պատմական զարգացման ընթացքը միջին հայերենում՝ մենք նկատում ենք, որ այդ զուգամտությունները վերջինիս մեջ համեմատաբար քիչ են, որովհետև նրանց էական մասը չի թափանցում միջին հայերենի բառապաշար, աստիճանաբար հոլովումները պարզեցվում են, խառն հոլովումները վերանում են, և հիմնականում տարածվում է ի հոլովումը: Ածականները, թվականները սկսում են հոլովվել փոխանվանաբար:

Քանի որ մեզ հետաքրքրում է դասական գրաբարի հոլովակաճ զուգամտություն ունեցող բառերի պատմական զարգացման ընթացքը միջին գրական հայերենում և ոչ թե միջին հայերենում առաջացած հոլովակաճ զուգամտություն ունեցող բառերը, որոնք համեմատաբար շատ են, ուստի մենք քննել ենք Հր. Աճառյանի վերոնշյալ բառացանկը, հիմք ընդունելով Մխիթար Հեթանոս «Ջերմանց մխիթարութիւն» աշխատության և Ֆրիկի բանաստեղծությունների բնագրերն ու համադրաբանները:

Պարզվում է, որ միջին գրական հայերենի մեր ուսումնասիրած աղբյուրներում այդ բառացանկից թեք հոլովներով գործածվել են հետևյալ բառերը. աղքատ, ապտակ, առագաստ, առուտ, բերդ, բլուր, գանձ, գիշեր, գոյն, գութ, դրամ, թաւ, ժամ, ժողովորդ, լար, խաղող, խոզ, խորհուրդ, ծախք, ծաղիկ, ծնունդ, կաշտ, կապար, կողպուտ, ձախ, ձեռն, մահ, մաղձ, մարգարիտ, նարոտ, նաւ, շնոր(հ), ոտն, ուլ, չափ, վնաս, ցուրտ, փախուստ, փոր, փորձ, քանքար, քար: Այս բառերից գրաբարի զուգամե հոլովումները պահպանել են հետևյալ բառերը. խաղող, խոզ, ծաղիկ, ձեռն, մահ, մաղձ, շնորհ, սոն, ուլ, ցուրտ, փոր, որոնցից ուլ(ի), ցուրտ(ու), փոր(ու), որոնք հոլովվել են նաև նոր առաջացած հոլովումներով:

Մյուս բառերը գործածվել են մեկ հոլովումով և հոլովակաճ զուգամտություն չեն դրսևորել: Այդ բառերի մի մասը պահպանել է գրաբարյան հոլովումը, իսկ մյուս մասը գե-

¹ Տե՛ս Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Բ. 3, Երևան, 1957, էջ 504:

² Նույն տեղում, էջ 518:

րազանցապես հոլովվել է ի հոլովմամբ՝ ենթարկվելով միջին գրական հայերենի հոլովական համակարգի օրինաչափություններին:

Ներկայացնում ենք ուլ(ի), ցուրտ(ու), փոքր(ու) բառերի համառոտ քննությունը:

Ուլ բառը գրաբարում հոլովվել է արտաքին թեքման ո, ու պարզ հոլովումներով: Միջին հայերենում՝ Մխիթար Հերացու աշխատության մեջ, այդ բառը գործածվել է 13 անգամ և հոլովվել է 4 անգամ արտաքին թեքման ո, 4 անգամ ու, և 5 անգամ ի պարզ հոլովումներով:

Յետ այնոր գառան և ուլոյ միս տուր (ՄՀԶՄ, էջ 98):

Եւ կերակուրք միջավայրք և պարկեշտ տուր, գերդ գառի միս և ուլու (ՄՀԶՄ, էջ 19):

Եւ կերակուր խաշուի շուր տալ ի թեթև մսէ և ի գինային, գերդ ուլի ոտներ և արտալայնի (ՄՀԶՄ, էջ 28):

Ինչպես տեսնում ենք, ուլ բառը միջին հայերենում դրսևորել է հոլովական զուգաձևություն:

ՅՈՒՐՏ բառը գրաբարում հոլովվել է արտաքին թեքման ո, ի պարզ հոլովումներով: Հերացու աշխատությունում և Ֆրիկի բանաստեղծություններում այդ բառը գործածվել է արտաքին թեքման ո և ու պարզ հոլովումներով: Մխիթար Հերացու աշխատության մեջ բառս գործածվել է 11 անգամ, որից 10 անգամ հոլովվել է ո հոլովմամբ, իսկ 1 անգամ՝ ու հոլովմամբ: Ֆրիկի բանաստեղծություններում՝ գործածվել է 1 անգամ՝ արտաքին թեքման ո պարզ հոլովմամբ:

Տօք ու ցրտոյն և ծարաւի, մերկ և քաղցած և անօթի, եկայք սուէք դուք ձեզ տեղի (ՖՔ, էջ 28):

Բնական տարրերին ի ներքս լինի արգիլած, ի խիստ ցրտուն կամ ընդ շնչոյն առնույն լինի այդ (ՄՀԶՄ, էջ 13):

Տուրտ բառը միջին գրական հայերենում դրսևորել է հոլովական զուգաձևություն:

ՓՈՐ բառը գրաբարում հոլովվել է արտաքին թեքման ո, ի պարզ հոլովումներով: Միջին գրական հայերենում՝ Հերացու աշխատության մեջ բառս գործածվել է 1-ական անգամ՝ արտաքին թեքման ու և ո պարզ հոլովումներով, իսկ Ֆրիկի բանաստեղծություններում՝ 4 անգամ՝ արտաքին թեքման ի պարզ հոլովմամբ:

Լուծն ի փորին թէ շուրջ անցնի, ոչ մի չի դիպնի (ՖՔ, էջ 287):

Եւ այս ցեղս ունի՝ յործամ ի յիւր յառաջքն խիստ չորութիւն լինի հանդիպել... գերդ փորուն լուծելն (ՄՀԶՄ, էջ 35):

Հաւկթի դէղնունցն... ի վերայ փոքր փորոյն կապէ (ՄՀԶՄ, էջ 148):

Փոր բառի հոլովական զուգաձևությունը հավաստի է:

Գրաբարի հոլովական համակարգի զուգաձևություն ունեցող բառերը միջին գրական հայերենին հաջորդած շրջանում, նոր զարգացում ապրելով, համարյա դարձել են միահոլով՝ հոլովվելով ի հոլովմամբ, սակայն այդ չի նշանակում, որ նոր գրական հայերենում չկան հոլովական զուգաձևություն ունեցող բառեր: Այդ իրողությունը արձանագրված է ժամանակակից հայոց լեզվի հոլովական համակարգին վերաբերող մենագրություններում, գիտական ուսումնասիրություններում, դասագրքերում: Այդ երևույթը իր դրսևորումը ունի նաև ժամանակակից հայերենի ուղղագրական, ուղղագրական, բացատրական բառարաններում:

Մեր ուսումնասիրած՝ դասական գրաբարի զուգաձև հոլովում ունեցող բառերի պատկերը՝ ըստ բառարանների քննության, ժամանակակից հայերենում հետևյալն է. Հր. Աճառյանի բառացանկից արդի գրական արևելահայերենում զուգաձևություն են դրսևորել 10 բառ, որոնք ոչ թե պահպանել են գրաբարի զուգաձև հոլովումները, այլ նոր գոյացած զուգաձևություններ են, որոնք առաջացել են գրաբարի հոլովական համակարգի փոփոխությամբ՝ պատմական զարգացման հետևանքով: Այդ բառերն են. անկողին (ու, ի), առավոտ (վա, ի), գիշեր (վա, ի), թաքուստ (ի կամ քստի, կամ թաքստյան), ժամ (վա, ի), ծնունդ (ի և ծննդի կամ հնց. ծննդյան), մահ (վան և ի, նան՝ ու հնց.), մութ (ի, ան), նոճ տե՛ս նոճի (ճու և իի), փախուստ (ի կամ հնց. փախստի, փախստյան): Մյուս բառերը արդի գրական արևելահայերենում անցել են ի հոլովման:

Գրաբարի զուգաձև հոլովում ունեցող բառերի պատմական զարգացման ընթացքը նոր գրական արևմտահայերենում քննելու նպատակով մենք ուսումնասիրել ենք Դանիել Վարուժանի բանաստեղծությունների ժողովածուն, ինչպես նաև արևմտահայ գրական լեզվի հոլովական համակարգի վերաբերյալ ուսումնասիրություններ: Այստեղ Հր. Աճառյանի բառացանկից թեքված գործածվել են հետևյալ բառերը. աղախին, աղերս, աճյուն, անդ, անիվ, անկողին, անձրև, անհույս, անջրպետ, ապառաժ, առագաստ, առավոտ, արջ, բերդ, բերք, գիծ, բոլոր, բուն, գանձ, գավիթ, գիշեր, գով, գորտ, գույն, գունդ, գոեճ, եղեգ, երկնք, գորք, գույգ, ժամ, ժողովուրդ, իղձ, լար, խաղող, խոյ, խորհուրդ, ծաղիկ, ծարիր, ծնունդ,

կապար, կատար, կիրճ, կողոպուտ, կոնք, ձեռք, ճիչ, ճիրան, մազ, մահ, մաղ, մաղձ, մարգարիտ, մեհյան, մութ, նարտ, սաղմոս, սնդուր, տաղանդ, տոհմ, ցուրտ, փախուստ, փոկ, փոս, փոր, փորձ, քաղց, քար, քարոզ, օղ, որոնցից զուգաձևություն են դրսևորել հետևյալ բառերը. գիշեր (վան, ի), եղեգ (ան, ի), ծնունդ (յան, ի), նավ (ու, ի), պատիվ (ու, ի), իսկ ձեռք (եր, երնի), մազ (եր, երնի), նարտ (ներ, նի), ոտք (եր, երնի): Սրանք զուգաձևություն են դրսևորել հոգնակի թվի կազմության ժամանակ: Պետք է նշել, որ հիշյալ բառերը ոչ թե պահպանել են գրաբարի զուգաձև հոլովումները, այլ նոր գոյացած զուգաձևություններ են, որոնք առաջացել են գրաբարի հոլովակաճ համակարգի փոփոխությամբ՝ պատմական զարգացման հետևանքով: Մյուս բառերը գործածվել են թեք հոլովաձևներով՝ ենթարկվելով արևմտահայերենի հոլովակաճ համակարգի օրինաչափություններին, գերազանցապես հոլովվել ի ընդհանրական հոլովմամբ, սակայն հոլովակաճ զուգաձևություն չեն դրսևորել:

Գիշեր բառը (գրք. ո, ի-ա) Դ. Վարուժանի բանաստեղծություններում դրսևորել է հոլովակաճ զուգաձևություն, հոլովվել է վան և ի հոլովումներով: Վան հոլովմամբ գիշեր բառը գործածվել է 10 անգամ իսկ ի հոլովմամբ՝ 1 անգամ: Այս վկայում է այն մասին, որ գիշեր բառի հիմնական հոլովումը վան-ն է:

Օրինակներ վան հոլովմամբ.

Մենք գիշերվան մեջ անկե վար պիտ իջնենք (ԴՎԲ, էջ 28):

Գիշերվան մեջ երկինքն էվել չքնաղ չէ (ԴՎԲ, էջ 75):

Օրինակ ի հոլովմամբ.

Օտարական, կտեսնե՛ս, ինչպես այսօր տնակներն այդ փլա՛ծ ու լուռ կապասեն... գիշերին (ԴՎԲ, էջ 44):

Եղեգ (գրք. եղեգ, ի, ո, եղեգն-ն) բառը Դ. Վարուժանի բանաստեղծություններում դրսևորել է հոլովակաճ զուգաձևություն: Թեք հոլովներում գործածվել է եղեգան (4 անգամ) և եղեգին (1 անգամ) ձևերով: Եղեգան ձևը հնաստիպ է, որը արևմտահայերենի համար կանոնական չէ, այն ունի միայն ոճական արժեք:

Օրինակներ ան հոլովմամբ.

Ընդ եղեգան փող լույս ելաներ (ԴՎԲ, էջ 21):

Ընդ եղեգան փող սիրտս ելաներ (ԴՎԲ, էջ 21):

Օրինակ ի հոլովմամբ.

Իր շարժումն հույլ է երթեմն, ու իր հասակն է նման Հուղմնասարսուռ եղեգին (ԴՎԲ, էջ 167):

Մճունդ (գրք. ո, ն (եան)) բառը գործածվել է թեք հոլովաձևերով և դրսևորել է հոլովակաճ զուգաձևություն: Մճունդ բառը գործածվել է յան և ի հոլովումներով:

Օրինակ յան հոլովմամբ.

Դու կննջես, իբրև ծննդյանդ օրն առջի (ԴՎԲ, էջ 75):

Օրինակ ի հոլովմամբ.

Հասած տեղն իմ համբուրիս կանցնի սարսուռն, որ բաղձանքն է ծնունդին (ԴՎԲ, էջ 153):

Ձեռք (գրք. ձեռն. եզ. ն, հոգ. ի-ա) բառը Դ. Վարուժանի բանաստեղծություններում գործածվել է թեք հոլովաձևերով, բայց զուգաձևություն է դրսևորել հոգնակի թվի կազմության ժամանակ: Բառիս հոգնակի թիվը կազմվել է ոչ միայն եր հոգնակիակերտ մասնիկով, այլև երնի (1 անգամ), մասնիկով. «... երնիս (եր-նի-ս), երնիդ (եր-նի-դ), երնին (եր-նի-ն) կաղապարները օգտագործվում են ստացական (բաշխական) հոգնակիի համար (սիրտերնիս, ոտքերնիդ)»³:

Օրինակ երնի հոգ. մասնիկով.

Մերեր, կիներ, տղաներ, Արձակ մազով, ձեռքերնում մեջ սանդալնին փողոցներե փողոց, լեռնե լեռ, մոլոր, կյանքին, կյանքին, քաղցր կյանքին կվազեն (ԴՎԲ, էջ 55):

³ Հ. Զ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Երևան, 1987, էջ 86:

Օրինակ եր հոգ. մասնիկով:

Հոն լվացին քեզ դատող Պիղատոսներն իրենց ձեռքերն ու հոգին (ԴՎԲ, էջ 51):

Մազ (գրք. թ, ի) բառը Դ. Վարուժանի բանաստեղծություններում գործածվել է թեք հոլովածներով, սակայն հոլովական զուգամտություն չի դրսևորել: Զուգամտություն կա հոգ-նակի թվի կազմության ժամանակ: **Մազ** բառը հոգնակի է կազմվել եր հոգնակիակերտով՝ 75 անգամ և երեք հոգնակիակերտով՝ 22 անգամ:

Օրինակ եր հոգ. մասնիկով.

Թողեք մեկտեղ կափարիչի տակ գամվին ծայրերը ձեր մազերուն (ԴՎԲ, էջ 58):

Օրհնյալ ըլլաք, հառաչանքի մեջ խեղդված

Ով արցունքներ, մազերն վար կալլակվող

Ով արյունի կաթիլներ (ԴՎԲ, էջ 118):

Օրինակներ երեք հոգ. մասնիկով.

... Մունկերն իրենց կծծեն, կփեթրեն մազերնին (ԴՎԲ, էջ 58):

Դեմքերուն վրա թափված են խառնափնթոր մազերնին (ԴՎԲ, էջ 91):

Նավ (գրք. նաւ, ու, ի-ա) բառը Դ. Վարուժանի բանաստեղծություններում գործածվել է թեք հոլովածներով և դրսևորել է հոլովական զուգամտություն: Նավ բառը գործածվել է ու (2 անգամ) և ի (1 անգամ) հոլովումներով:

Օրինակներ ու հոլովմամբ.

Ծրված կայմին ծայրն է նավուն ջրասույզ (ԴՎԲ, էջ 74):

Նավուն ներքև կատաղի ցողի պես ծովը խոպաց (ԴՎԲ, էջ 171):

Օրինակ ի հոլովմամբ.

Միջոն ցանկացալ հառած աչքերը

Նավին, Խոսող ճերմակ առազասուն... (ԴՎԲ, էջ 171):

Նարոտ (գրք. նարոտ, ու, ի-ա) բառը Դ. Վարուժանի բանաստեղծություններում գործածվել է թեք հոլովներով, սակայն հոլովական զուգամտություն չի դրսևորել: **Նարոտ** բառի հոգնակի թիվը 1-ական անգամ կազմվել է ներ և նի հոգնակիակերտ մասնիկներով, որով և դրսևորել է զուգամտություն:

Օրինակ ներ հոգ. մասնիկով.

Եվ վեհությունն այս ցասկոտ ալ կսկսի պսակվի կայծակներու շողշողոն նարոտներով հրատեսիլ (ԴՎԲ, էջ 105):

Օրինակ նի հոգ. մասնիկով.

Կկապեն մաքրենի մորենիին ճյուղերուն

Հարսանեկան նորք նարոտնին (ԴՎԲ, էջ 237):

Ոտք (գրք. ոտն, եզ. ն. հոգ. ի) բառը գործածվել է թեք հոլովներով, սակայն հոլովական զուգամտություն չի դրսևորել: **Ոտք** բառի հոգնակի թիվը կազմվել է եր՝ 32 անգամ և երեք՝ 2 անգամ հոգնակիակերտ մասնիկներով, որով և դրսևորել է զուգամտություն:

Օրինակներ եր հոգ. մասնիկով.

Աստվածուհիլոյն ոտքերուն տակ քնացալ (ԴՎԲ, էջ 111):

Մի տաք ինձի մարխերը ձեր կրակին

կամ հանգրվան մը ոտքերուս կարեվեր (ԴՎԲ, էջ 219):

Օրինակներ երեք հոգ. մասնիկով.

Դեռ քեկորներ շղթայի, գոր ջարդեցին,

Մերկ ոտքերուն հետ ընդքարշ Մալհատակին

Շոինդ շոինդ կհնչեն (ԴՎԲ, էջ 112):

Օ՞ գանգուրները խխում, կաթիլներով ծանրացած,

Որոնք բորիկ ոտքերուն սատափ ցողեր կծորեն (ԴՎԲ, էջ 187):

Պատիվ (գրք. պատիւ, ո, ի) բառը Դ. Վարուժանի բանաստեղծություններում դրսևորել է հոլովական զուգամտություն, գործածվել է 1-ական անգամ՝ պատվոյն և պատիվիդ հոլովածներով:

Օրինակ ու հոլովմամբ.

Չէ՞ գար կանգնիլ փատիշաֆին դեմ առ դեմ,
Տարածելով իր պատվոյն, իմ գլխու վրան
Հսկայական թուրին ստվերը վսեմ (ԴՎԲ, էջ 132):

Օրինակ ի հոլովմամբ.

Կործքս վահան ընել կործիդ նշավակ
Եվ քողն ըլլալ պատիվիդ (ԴՎԲ, էջ 132):

Ինչպես միջին, այնպես էլ նոր գրական հայերենների՝ արևելահայերենի և արևմտահայերենի քննության ընթացքում մեզ հանդիպել են զուգան հոլովում ունեցող մի շարք նոր բառեր, որոնք առանձին ուսումնասիրության անոթ են:

Н. А. МКРТЧЯН—Процесс развития разносклоняемости габара в среднеармянском и новоармянском языках.— Автор статьи взяла за основу словник из 167 разносклоняемых слов, который представлен в третьем томе «Полной грамматики армянского языка» Г. Ачаряна. В статье исследованы 11 из 167 слов, которые сохранили разносклоняемость древнеармянского в среднеармянском литературном языке. Из них 3 слова склонялись также в новых склонениях.

Кроме этого, автор рассматривает разносклоняемость 10 слов в новоармянском восточном языке и 5 слов в новоармянском западном языке, которые не сохранили разносклоняемость габара, а являются новыми формами разносклоняемости.